



**ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ի Ր

2010թ. օգոստոս

Եվրոպական հարևանության քաղաքականությունը և թերի ժողովրդավարությունը

Եվրոպական Միության հարևանության հարավային շրջաններում վերջին ժամանակներս ընթացող հախուռն գործընթացները և Բրյուսելի արձագանքը Հյուսիսային Աֆրիկայի և Միջին Արևելքի ճգնաժամային իրավիճակին անկանխատեսելի և ծանր հետևանքներ կարող են ունենալ Եվրոպական հարևանության քաղաքականության համար: “Ժասմինի” հեղափոխությունը և Եգիպտոսում, Եմենում, Բահրեյնում ու Սիրիայում ծայր առած բողոքի այիքները բացահայտեցին ԵՄ հարևանության քաղաքականության համար մշակված ինստիտուցիոնալ դաշտի և իրական չնախատեսված մարտահրավերների միջև առկա անհամապատասխանությունը: Այդ մարտահրավերներին կշռադատված կերպով արձագանքելու ջանքերում ԵՄ-ը և Արևելյան հարևանության ավտորիտար ռեժիմները ձեռնամուխ են եղել իրենց քաղաքականությունը և ինտեգրման գոյություն ունեցող ռազմավարությունը արմատապես վերաիմաստավորելու խնդրին: ԵՄ-ը պետք է փոփոխությունների ենթարկի իր քաղաքական կուրսը, քանի որ աշխարհը փոխվում է, և ԵՄ սահմաններից դուրս ընթացող միջազգային գործընթացների վրա ազդեցություն ունենալու նրա հնարավորություններն ավելի ու ավելի սահմանափակ են դառնում: Մինչույն ժամանակ, արևելյան հարևանության քաղաքական էլիտան կարծես առավել կենտրոնացած է ավտորիտար չափանիշների կիրառման բացթողումներն ուսումնասիրելու և շտկելու, քան տեղական քաղաքական դաշտը ժողովրդավարեցնելու ուղղությամբ ջանքեր գործադրելու խնդրի վրա: Արաբական աշխարհում ընթացող հեղափոխական իրադարձություններն ակնհայտորեն վտանգի տակ են դրել նաև մյուս ավտորիտար ռեժիմները, որոնք շարունակում են չնկատել հիմնարար փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ ձգտելով ավելի ու ավելի ամրապնդել իրենց իշխանությունը և այն պահպանելուն ուղղված ջանքերը: Այս համատեքստում, լուրջ քննարկման խնդիր է, թե Միջին Արևելքում ընթացող հեղաշրջումներն ինչպես կարող են անդրադառնալ նման ավտորիտար երկրների վրա, ինչպիսին է Հայաստանը, և արդյոք ԵՄ-ը ինստիտուցիոնալ և դինավազիտական առումով պատրաստ է համարժեքորեն արձագանքելու այդպիսի զարգացումներին: Այս խնդիրն ըմբռնելը օրհասական նշանակություն ունի, քանի դեռ ԵՄ-ը

ավելի եռանդուն կերպով չի վերաձևավորել իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ:

Անկասկած է, որ Հայաստանի կառավարությունը փորձառություն է ձեռք բերել մարդու իրավունքների և քաղաքական բարեփոխումների ոլորտների վրա ճնշումներին դիմադրելու հարցում: Հետադարձ հայացք գցելով ԵՄ-Հայաստանի միջև վերջին 5 տարվա հարաբերություններին, 2010թ. Գործընկերություն հանուն բաց հասարակության կողմից ներկայացված ԵՀՔ մոնիտորինգի զեկույցը պարբերաբար անդրադարձել է այն անհամապատասխանություններին, որոնք առկա են ժողովրդավարության ֆորմալ բաղկացուցիչների՝ ընտրությունների, քաղաքական բազմակարծության կամ սահմանադրության հարցերի հանդեպ իշխանությունների կողմից ցուցաբերվող մոտեցման մեջ՝ պնդելով, որ ռեժիմը սովորել է հմտորեն իրեն ենթարկել ժողովրդավարության ինստիտուտները, որպեսզի դրանք ստեղծեն բաց քաղաքականության պատրանք՝ առանց էության մեջ այդպիսին լինելու: Հայաստանյան իշխանությունը հիմնականում պահպանում է ժողովրդավարության ձևական տարրերը՝ ընդգծելով, որ այն յուրովի հավատարիմ է դրա առանցքային սկզբունքներին, ինչպիսիք են հաշվետու լինելը կամ բազմակարծության ապահովումը: Այնուամենայնիվ, հարավում տեղի ունեցող դեպքերը և Հայաստանում առկա մտահոգիչ քաղաքական միտումները հաշվի առնելով՝ ԵՄ-ը կարիք ունի ամբողջապես վերանայելու արևելյան հարևանության նկատմամբ իր քաղաքականությունը և վերադառնալու պայմանական ներգրավվածությանը, մինչ Հայաստանի կառավարությունը պետք է դադարեցնի իշխանության բևեռացման քաղաքականությունը և ավելի մեծ ուշադրություն դարձնի արտաքին քաղաքականության իր գերակայությունների վերանայման խնդրին:

2010թ. շարունակաբար չորրորդ տարին էր, երբ ԵՀՔ-ը քաղաքական բարեփոխումների և տնտեսական զարգացման նպատակների առումով Հայաստանում թերի է իրականացվել: Տարօրինակ կերպով, Հայաստանի կառավարությունը կարծես շարժվում է ավտորիտար համակարգի ամրապնդման ուղղությամբ, և էլիտան շարունակում է նախապատվությունը տալ մասնակի բարեփոխումների ստատուս քվո-ի պահպանմանը՝ շոշափելի քաղաքական անցում կատարելու փոխարեն: Արդյունավետ բարեփոխումներին ուղղված քայլեր իրականացնելու քաղաքական կամքի բացակայության պայմաններում Հայաստանի իշխանությունները գերադասում են նախաձեռնել օրենսդրական նախագծերի մշակմանն ուղղված գործունեություն՝ հիմնականում իրականացնելով պատրանք ստեղծող բարեփոխումներ, որոնց հետևանքով ներքին քաղաքական դաշտը իրականում որևէ փոփոխություն չի կրում: Ըստ մոնիտորինգի զեկույցի տվյալների, 2010թ. արձանագրվել են խիստ փոքրաթիվ, եթե այսպիսիք եղել են, բարելավումներ Գործողությունների ծրագրով նախանշված նպատակների և քաղաքական փոփոխությունների իրականացման հարցում: Փաստացիորեն, երկիրը կարծես շարժվում է հակառակ ուղղությամբ՝ հաշվի առնելով հակաժողովրդավարական դրսևորումների շարունակական ընթացքը և խիստ բևեռացված ավտորիտար առաջնորդների՝ իրենց իշխանությունն ամրապնդելու ջանքերը: Կառավարության՝ թվայնացման անցման գործընթացի ռազմավարությունը, որը

իշխանությունների համար առավել դյուրին կդարձնի հեռարձակվող լրատվամիջոցների մեծ մասի վերահսկումը, ինչպես նաև Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքում կատարված փոփոխությունները այս ընդհանուր բացասական միտման լավագույն օրինակներն են: Հավաքների ազատությունը, արդարադատության մատչելիությունը և արդար դատավարության իրավունքը, արդարադատության համակարգի անկախությունը, համակարգային կոռուպցիան, ծայրահեղ մենաշնորհայնացումը մնում են խիստ մտահոգիչ խնդիրներ: Այս անառողջ քաղաքական մթնոլորտին և վատթարացող տնտեսական իրավիճակին զուգահեռ, տագնապ են հարուցում նաև արտագաղթի խնդիրը և աղքատության ցուցանիշները, որոնք այն գինն են, որը կրում է հայաստանյան հասարակությունը, մինչ քաղաքական էլիտան վայելում է իշխանությունը գրավելու արդյունքում ձեռք բերած առավելությունները: Այս տագնապալի զարգացումները պետք է մղեն ԵՀՔ Գործողությունների ծրագրի շրջանակներում առկա ռազմավարական գերակայությունների հրատապ վերանայման և առհասարակ արտաքին քաղաքական կուրսի շուրջ համընդհանուր բանավեճերի ծավալման: Հայաստանի կառավարությունը պետք է կտրուկ կերպով բարելավի ԵՀՔ իրականացման ընթացքը, եթե այն շարունակում է հայտ ներկայացնել ԵՄ կողմից ֆինանսավորվելու համար: Քանի որ վտանգված է նաև Հազարամյակի մարտահրավերների ծրագրի կողմից ցուցաբերվող օժանդակությունը, առաջնորդները պետք է հասկանան, որ ռեսուրսներ շահելու իրենց ռազմավարությունը այլևս չի կարող ազատել նրանց բարեփոխումների բացակայության պատասխանատվությունից, ձեռնամուխ լինեն առավել հաստատուն և կայուն զարգացման կուրսի իրականացմանն ու բարենպաստ հիմքեր ստեղծեն ժողովրդավարությանն անցում կատարելու համար:

Թեպետ ԵՀՔ մեկնարկից սկսած ԵՄ-ն ավելի, քան երբեք, ակտիվորեն ներգրավված է եղել Հայաստանում՝ հույս ունենալով նպաստել երկրի քաղաքական և տնտեսական զարգացմանը, վերջին 4 տարիների ընթացքում այն չի հասել Գործողությունների ծրագրի հիմնական նպատակների իրականացմանը, և ապացուցվել է նրա ներկայիս ռազմավարության անարդյունավետությունն ու ծախսատար լինելը: Բրյուսելում վերջերս տեղի ունեցած բուռն քննարկումները, որոնց արդյունքում ԵՀՔ վերանայման հարցը ԵՄ քաղաքական օրակարգի վերջին տեղերից մղվեց դեպի մեջին դիրքեր, ցույց է տալիս հարևանությունում իր կարգավիճակը պահպանելու ԵՄ վճռականությունը: Ակնհայտ է, որ ԵՄ ներգրավվածությունը նշանակալի ազդեցություն չի թողել տարածաշրջանի քաղաքական զարգացումների վրա, ինչպես նաև չի կանխել իշխանության բեկեռացումը: Այս իրավիճակում ստացվում է, որ ԵՄ հարկատուների գումարները, ժողովրդավարությանն ու մարդու իրավունքներին առնչվող նախաձեռնություններին աջակցելու փոխարեն, ուղղվում են տեղական կոռումպացված էլիտայի ամրապնդմանը: Մինչ հարավային հարևանության շրջանում օրհասական են դառնում փոփոխությունների կոչերը, և բողոքի ձայն բարձրացնողները մարտահրավեր են նետում իրեն ավտորիտար առաջնորդներին, որոնցից շատերի հզորացմանն անուղղակի կերպով նպաստել են ԵՄ միջոցները, առավել ակնհայտ է դառնում առկա քաղաքականությունը վերանայելու անհրաժեշտությունը:

Նախաձեռնելով գաղափարական բանավեճ՝ Բրյուսելում քաղաքական որոշումներ կայացնողները պետք է ընդունեն, որ ԵՀՔ-ը կարող է դառնալ քաղաքականապես աննպատակահարմար, եթե Գործողությունների ծրագրով նախանշված հիմնական խոստումների ուղղությամբ առաջընթաց չգրանցվի: Չնայած ներկայումս ԵՀՔ շուրջ ծավալվող բանավեճերում կենտրոնական տեղ է զբաղեցնում՝ ավելին հանուն ավելի՝ գաղափարը (ավելի մեծ ֆինանսական և քաղաքական աջակցություն ավելի շատ բարեփոխումներ իրականացնող և ավելի ժողովրդավարական երկների համար), ԵՄ-ը, նախքան հստակ և կայուն քաղաքական կուրսի ձևավորումը, պետք է անդրադառնա այս մոտեցման շուրջ առկա մեթոդոլոգիական և գաղափարական խնդիրներին: Հաջողված հարևանության քաղաքականություն իրականացնելու համար ԵՄ-ը պետք է վճռականորեն հետամուտ լինի ԵՀՔ նպատակների իրագործմանը, ավելի խիստ լինի գործողությունների բացակայությունը կամ դրանց տապալումը՝ դատապարտելու հարցում, ավելի կոշտ քաղաքական պայմաններ առաջադրի Ասոցացման համաձայնագրի և մասնավորապես դրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Խոր և համապարփակ ազատ առևտրի գիտիների և վիզաների շուրջ ընթացող բանակցություններում: Եվ վերջապես, ներկա հանգամանքներում Հայաստանում քաղաքական բարեփոխումների գործընթացին ներազդելու հնարավորություն ունենալու համար, ԵՄ-ը պետք է մշակի հարևանության ավելի հստակ և հետևողական ռազմավարություն:

Առաջարկություններ Հայաստանում քաղաքական որոշումների պատասխանատուների համար

- Ապահովել դատավորների անկախության երաշխիքներ՝ սահմանափակելով դատավորների ցուցակի վրա ներազդելու հարցում Նախագահի լիազորությունները և օրենքի տեքստից հանելով Նախագահի համար ընդունելի թեկնածություն բառակապակցությունը:

- Իրականացնել նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը և 2009-2012թ.թ. Գործողությունների ծրագիրը, ինչպես նաև կոռուպցիայի սահմանափակմանն ուղղված օրենքներ:

- Մշակել թվայնացմանն անցնելու ընթացքում ձեռնարկվելիք հիմնական գործողությունները՝ նախատեսող լայնածավալ փաստաթուղթ և լրատվամիջոցները կարգավորող մարմինների համար նախատեսել անկախության երաշխիքներ՝ դրանց ձևավորման կարգում, անդամների ընտրության չափանիշների մշակման և այլ հարցերում ապահովելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

- Ապահովել առողջ քաղաքական միջավայր ազատ և անկախ ընտրությունների անցկացման համար՝ հարթելով խիստ խնդրահարույց 2008թ. ընտրությունների կնճիռները, և լուծել հավաքների ազատության սահմանափակումների, մամուլի, ընդդիմության

աջակիցների և ակտիվիստների դեմ ճնշումների, ինչպես նաև քաղաքական բանտարկյալների առկայության հետ կապված խնդիրները:

- Հետաքննել բանակում մահվան յուրաքանչյուր դեպք և մանրամասն ու լիարժեք հաշվետվություն ներկայացնել հասարակությանը: Վերջ դնել անպատժելիության մթնոլորտին՝ ապահովելով դեպքերի թափանցիկ և անկախ հետաքննությունը, ինչպես նաև արդարացի դատավարության չափանիշները:

- Ապահովել խոշտանգումների դեպքերի լիարժեք հետաքննություն և պատասխանատվության կանչել դրանք իրականացնողներին: Դրանց մասին տեղեկացնել հասարակությանը՝ յուրաքանչյուր դեպքի հետաքննության արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնելու միջոցով (առանց դատավարության ընթացքը բացահայտելու և հետաքննության ընթացքը վտանգի ենթարկելու):

Առաջարկություններ ԵՄ քաղաքական որոշումների պատասխանատուների համար

- Մշակել հարևանության հետևողական քաղաքականություն՝ նախաձեռնելով թե նպատակների և թե գերակա ռազմավարությունների հիմնարար վերափոխում:

- Առաջընթացը համապատասխանեցնել ԵՀՔ Գործողությունների ծրագրով նախանշված նպատակների հետ՝ ողջ աշխարհում ժողովրդավարության հաստատման վստահելի և ազդեցիկ աջակցի իր դերը վերահաստատելու նպատակով:

- Պակաս դիվանագիտիական և առավել հաստատակամ վերաբերմունք ցուցաբերել Ասոցացման համաձայնագրերի շուրջ ընթացող երկխոսության համար՝ շեշտելով մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքի կարևորությունը համագործակցության հարցում:

- Պայմաններ առաջադրել ֆինանսների տրամադրման համար և ապահովել մշտական մոնիտորինգ ու վերահսկողություն:

- Հարևանության քաղաքականության մշակման կամ գնահատման հարցում շեշտը դնել արդյունքների, և ոչ թե գործընթացի վրա:

- Լայնորեն ներգրավել քաղաքացիական հասարակությանը և աջակցել նրա վերահսկողական գործունեությանն ու մասսայական նախաձեռնություններին՝ որոշումների կայացման և բարեփոխումների ընթացքին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման նպատակով: